ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«17» 06 2022թ.
No 002592

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ
ՊԱՐՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈՎԻԿԻ ԵՍԱՅԱՆԻՆ
(Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա, 40/1, 21)

Հարգելի պարոն Եսայան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հունիսի 14-ի ««Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն, «Թիմ» փակ բաժնետիրական ընկերություն, ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայան և Ալեքսանդր Հովիկի Եսայան» անձանց խմբի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 223-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 223 որոշում**) հարուցել է վարույթ:

Ձեր լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով կարող եք երկշաբաթյա ժամկետում հարուցված վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ Հանձնաժողով ներկայացնել գրավոր դիրքորոշում և այն հիմնավորող նյութեր: Ձեր հիմնավոր միջնորդության հիման վրա երկշաբաթյա ժամկետը Հանձնաժողովի նախագահի գրությամբ կարող է երկարաձգվել մինչև երկշաբաթյա ժամկետով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Կից ներկայացվում է Հանձնաժողովի թիվ 223-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «8» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Համակենտրոնացումների, պետական օժանդակության և պետական գնումների վերահսկողության բաժին
Կատարող՝ Աննա Կոստանյան
Հեռ՝. (+374 60) 830 840 (233)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 8 հուլիսի 2022 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2022 թվականի թիվ 223-Ա

««ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ԹԻՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ՀԱՅԿ ՀՈՎԻԿԻ ԵՍԱՅԱՆ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈՎԻԿԻ ԵՍԱՅԱՆ» ԱՆՁԱՆՑ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հունիսի 14-ի նիստում, քննարկելով ««Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն, «Թիմ» փակ բաժնետիրական ընկերություն, ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայան և Ալեքսանդր Հովիկի Եսայան» անձանց խմբի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) 2022 թվականի մայիսի 13-ին «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) առերևույթ խախտման մասին հաղորդում է ներկայացրել Հանձնաժողով (այսուհետ նաև՝ **Հաղորդում**):

Հաղորդմամբ մասնավորապես նշվել է, որ

Ընկերությունը կարծում է, որ նմանաբնույթ իրավիճակների կանխատեսմամբ է Հանձնաժողովը 2020 թվականի հուլիսի 9-ի «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական և «Թիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համակենտրոնացումը պայմանով թույլատրելու մասին» թիվ 282-Ա որոշմամբ (այսուհետ՝ **թիվ 282-Ա որոշում**) նախատեսել որոշակի սահմանափակումներ Հայկ Եսայանի և Ալեքսանդր Եսայանի՝ Ընկերության կառավարմանը մասնակցության հարցերում: Որոշման կայացման հիմքում Հանձնաժողովը դրել է Հայկ Եսայանի և Ալեքսանդր Եսայանի կողմից Ընկերության գործունեությանը չխոչընդոտելու և մրցակցության օրենսդրության ապահովման հիմնարար սկզբունքները: Ընկերությունը կարծում է վերոնշյալ տրամաբանության շրջանակներում վերջիններիս կողմից իրականացվող գործողությունները ևս Հանձնաժողովի կողմից պետք է քննարկման և քննության առարկա դառնան. ակնհայտ է, որ Ընկերության գործունեությանը չխոչընդոտելու պահանջն իր մեջ ներառում է ոչ միայն որոշ գործողությունների կատարումից ձեռնպահ մնալու, այլև որոշակի այնպիսի գործողություններ կատարելու պահանջ, որոնք բիզնես դատողության վրա հիմնվող և Ընկերության շահերից տարբերվող շահերով չկաշկանդված բաժնետերը կկատարեր այլ հավասար պայմաններում:

Ընկերության համար ակնհայտ է, որ Հայկ Եսայանը և Ալեքսանդր Եսայանը չարաշահում են իրենց իրավունքները՝ խաթարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի դրույթները, որոնց համաձայն քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում: Մրցակցության սահմանափակման նպատակով քաղաքացիական իրավունքներն օգտագործել, ինչպես նաև շուկայում գերիշխող դրությունը չարաշահել չի թույլատրվում:

Ընկերությունը նշել է, որ Ընկերության նշված բաժնետերերի վարքագիծը պետք է որակել նաև Օրենքի գլուխ 7-ով նախատեսված անբարեխիղճ մրցակցության

դրույթների խախտում՝ հաշվի առնելով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով նախատեսված այն պահանջը, որ անբարեխիղճ մրցակցության դեպքերում տնտեսավարող սուբյեկտ է համարվում նաև ֆիզիկական անձը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 76-րդ և 77-րդ հոդվածները՝ Ընկերությունը խնդրել է ներկայացված Հաղորդումն ընդունել տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման առիթ և հանձնարարել վերացնելու տնտեսական մրցակցության բնագավառում Հայկ Եսայանի և Ալեքսանդր Եսայանի կողմից թույլ տված խախտումները, այդ թվում՝ որպես վերջիններիս կողմից «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (2020 թվականի նոյեմբերի 16-ին անվանափոխվել է «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության) իրական շահառու դառնալու Հանձնաժողովի համաձայնության նախապայմանների շարունակական տրամաբանական դրսևորում՝ պահպանելով թիվ 282-Ա որոշմամբ սահմանված պայմանները

Հանձնաժողովը 2022 թվականի մայիսի 23-ի գրություններով դիմել է ֆիզիկական անձինք Հայկ Եսայանին և Ալեքսանդր Եսայանին՝ պահանջելով Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը՝

1) արդյոք ֆիզիկական անձինք Հայկ Եսայանն ու Ալեքսանդր Եսայանը Ընկերության կողմից բարձրացված հարցի վերաբերյալ ստացել են ծանուցումներ,

2) եթե տացել են, ապա ինչ են պատասխանել Ընկերությանը,

3) եթե ստացել են և չեն պատասխանել՝ ներկայացնել պատճառները և հիմնավորումները:

Ֆիզիկական անձ Հայկ Եսայանը 2022 թվականի հունիսի 2-ին Հանձնաժողով ներկայացրած գրությամբ նշել է, որ Հանձնաժողովի գրությամբ բարձրացված հարցի վերաբերյալ Ընկերությունից կամ նրա որևէ իրավասու մարմնից կամ նրա կողմից պատշաճ լիազորված անձի կողմից պատշաճ կարգով ուղարկված ծանուցում չի ստացել:

Ֆիզիկական անձ Ալեքսանդր Եսայանը Հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 23-ի գրությանը դեռևս չի պատասխանել:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Հանձնաժողովը թիվ 282-Ա որոշմամբ թույլատրել է «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական և «Թիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համակենտրոնացումը՝ «Թիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 100 տոկոս փայաբաժնի ձեռքբերման միջոցով՝ հետևյալ պայմաններով.

1) ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը պարտավոր են համակենտրոնացումը գործողության մեջ դնելուց հետո ձեռնպահ մնալ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «զ», «է», «ը» կետերով և «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 15.6-րդ կետով նախատեսված իրավունքների իրականացումից.

2) ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը պարտավոր են համակենտրոնացումը գործողության մեջ դնելուց հետո ձեռնպահ մնալ «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության վերաբերյալ օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկությունները պահանջելուց և ստանալուց:

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական էլեկտրոնային համակարգում առկա հասանելի տեղեկությունների և Հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 9-ի թիվ 282-Ա որոշմամբ եզրափակված վարույթում առկա տվյալների համաձայն՝

1) Ալեքսանդր Հովիկի Եսայանը ունի 50 տոկոս անուղղակի մասնակցություն «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունում.

2) Հայկ Հովիկի Եսայանը ունի 50 տոկոս անուղղակի մասնակցություն «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունում.

3) Հայկ Հովիկի Եսայանը ունի 50 տոկոս ուղղակի մասնակցություն «Թիմ» փակ բաժնետիրական ընկերությունում.

4) Ալեքսանդր Հովիկի Եսայանը ունի 50 տոկոս ուղղակի մասնակցություն «Թիմ» փակ բաժնետիրական ընկերությունում.

5) Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը եղբայրներ են:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտ է համարվում անհատ ձեռնարկատերը, իրավաբանական անձը, այլ կազմակերպությունը, դրա ներկայացուցչությունը կամ մասնաճյուղը, անձանց խումբը կամ անձանց միությունը, իսկ սույն օրենքով նախատեսված՝ համակենտրոնացման, անբարեխիղճ մրցակցության և տնտեսական գործունեության համակարգման դեպքերում տնտեսավարող սուբյեկտ է համարվում նաև ֆիզիկական անձը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի իմաստով՝ անձանց խումբն իրավաբանական և (կամ) ֆիզիկական այնպիսի անձանց խումբ է, որոնց միջև փաստացի առկա է փոխկապվածություն կամ վերահսկողություն, և որոնց նկատմամբ բավարարվում է հետևյալ պայմաններից առնվազն մեկը.

1) կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ կազմակերպությունում իր մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու (այդ թվում՝ առք ու վաճառքի, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության, լիազորագրի կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին.

2) կազմակերպությունները, եթե միևնույն ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ կազմակերպություններում իր մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու (այդ թվում՝ առք ու վաճառքի, լիազորագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության կամ այլ գործարքների միջոցով)

կազմակերպությունների կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին. (…)

12) ֆիզիկական անձը, նրա ամուսինը, ծնողը, զավակը, որդեգրողը, որդեգրվածը, եղբայրը կամ քույրը. (…)

14) ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք, որոնցից յուրաքանչյուրը սույն մասում նշված հիմքերից որևէ մեկով անձանց խումբ է կազմում միևնույն անձի հետ, և այլ անձինք, որոնք սույն մասում նշված հիմքերից որևէ մեկով տվյալ անձանցից որևէ մեկի հետ անձանց խումբ են կազմում:

Այսպես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունում և «Թիմ» փակ բաժնետիրական ընկերությունում ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը ունեն 50-ական տոկոս մասնակցություն, ինչպես նաև վերջիններս հանդիսանում են եղբայրներ, հետևաբար հիմք ընդունելով Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 12-րդ և 14-րդ կետերը՝ «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը, «Թիմ» փակ բաժնետիրական ընկերությունը, ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը դիտարկվում են անձանց խումբ (այսուհետ նաև՝ **Անձանց խումբ**):

Հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 9-ի թիվ 282-Ա որոշման կայացման պահին գործող խմբագրությամբ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը թույլատրվում կամ արգելվում է Հանձնաժողովի որոշման հիման վրա, որը կարող է պարունակել նաև համակենտրոնացման մասնակցի (մասնակիցների) համար պարտադիր կատարման ենթակա պայմաններ և պարտավորություններ:

Նույնաբովանդակ դրույթ է նախատեսված նաև գործող Օրենքի 72-րդ հոդվածի 4-րդ մասով:

Օրենքի 99-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովի որոշումները, դրանցում սահմանված պայմանները, պարտավորությունները և տրված հանձնարարությունները պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Տվյալ դեպքում

կարող է պարունակել անբարեխիղճ մրցակցության կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված պայմանների և պարտավորությունների չկատարման հատկանիշներ:

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև 10 տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի որոշմամբ ամրագրված խախտումները սահմանված ժամկետում չդադարեցվելու կամ չշտկվելու կամ որոշմամբ նախատեսված պայմանները, պարտավորությունները կամ հանձնարարությունները սահմանված ժամկետում չկատարվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Բացի այդ, Օրենքի 72-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշմամբ նախատեսված պայմանները և պարտավորությունները խախտելու դեպքում Հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշումը:

Օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը համարվում է արգելված, եթե Հանձնաժողովի կողմից Օրենքի 72-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որոշման դեպքում համակենտրոնացման մասնակցի (մասնակիցների) կողմից պարտադիր կատարման ենթակա պայմանների և պարտավորությունների խախտման հիմքով Հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչել համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Անձանց խմբի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ««Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն, «Թիմ» փակ բաժնետիրական ընկերություն, ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայան և Ալեքսանդր Հովիկի Եսայան» անձանց խմբի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. հունիսի 15

Երևան